# ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԵՆԵԴԻԿՏ ԺԶ ՊԱՊԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԻ

## ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Իմ գահակալության սպանձման հանդիսավոր արարողությանը անմիջապես հաջորդող այս օրերին ես կցանկանայի արտահայտել իմ խորին երախտագիտությունը այդ արարողությանը, ինչպես նաեւ աղոթքին մասնակցության համար, այն աղոթքին, որ համայն Կաթոլիկ եկեղեցին բարձրացրել է առ Աստված ինձ վստահված ծանր առաքելության համար, մի առաջադրանք «որ իսկապես վեր է մարդկային հնարավորություններից», որը սակայն հնարավոր է դառնում աստվածային ողորմածությամբ եւ ուղեկցվում բազմաթիվ քրիստոնյաների հավատքով, հույսով եւ սիրով: Ես նաեւ իմ շնորհակալությունն եմ հայտնում այդ առիթով ինձ ընծայված նվերի համար:

Այս օրերին ես զգացի, թե ինչպես աշխարհի բոլոր քրիստոնյաները, անկախ իրենց դավանական տարբերություններից, մեզ հետ խորը վշտով սգում էին Հովհաննես-Պողոս Բ Պապի կորուստը:

Ես անկեղծորեն ցանկանում եմ հուսալ, որ նման վերաբերմունքը երաշխիքն է առաջ ընթանալու այն ճանապարհով, որը մեզ պետք է տանի մեր Եկեղեցիների միջեւ ամբողջական հաղորդության վերահաստատմանը:

Քանի որ Քրիստոնյա Արեւելքը պատրաստվում է այս շաբաթ տոնել Սուրբ Զատիկը, ես ուրախությամբ մեջբերում եմ Ս. Հովհան Դամասկացու հետեւյալ խոսքերը.

*Հարության օրն է, ժողովուրդներ, եկեք ցնծանք ուրախությամբ,*
*Զատիկ է, մեր Տիրոջ Զատիկը, մեր Աստված Քրիստոսը ուղեկցել է մեզ*
*մահից դեպի կյանք,*
*երկրից երկինք՝*
*երգելով շարականը հաղթանակի:*

Այս զգացումներով՝ ես վերառաքում եմ իմ փառաբանությունը առ Աստված՝ *Քրիստոս հարյավ:*

**ԲԵՆԵԴԻԿՏ ԺԶ ՊԱՊ**
Վատիկան
27 ապրիլի, 2005 թ.